

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ Օրենք) 37-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«8) եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը:»:

Հոդված 2. Օրենքի 70-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Սնանկության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին և «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից հանվել են սնանկության գործերով կառավարիչների լիցենզավորման վերաբերյալ դրույթները, ինչի արդյունքում ստացվում է, որ ցանկացած անձ կարող է լինել սնանկության գործերով կառավարիչ և տնօրինել, վաճառել այլ անձանց գույքը, ինչն անընդունելի է: Այդ առումով առաջարկում ենք նախագծում սահմանել պետական լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով սնանկության գործերով կառավարիչների որակավորմանը վերաբերող դրույթներ:	Ընդունվել է:	Նախագծի 18-րդ, 19-րդ, 20-րդ, 23-րդ, 24-րդ, 106-րդ հոդվածները խմբագրվել են, մասնավորապես սնանկության գործերով կառավարիչների լիցենզավորման վերաբերյալ դրույթների փոխարեն նախատեսվել է ՀՀ կառավարության սահմանած կարգի համաձայն կառավարիչների որակավորմանը վերաբերող դրույթներ:

